

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԻՔ**

ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության փորձագետ Տաթևիկ Սուքիասյան

ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ Անահիտ Մնացականյան

- **ՔԱՂԱՔ / ԵՐԿԻՐ/ԺԱՄԿԵՏ**

Աստանա (Ղազախստանի Հանրապետություն), 24-29-ը ապրիլի 2018 թ.

- **ՆՊԱՏԱԿԸ**

- Մասնակցություն Եվրասիական գրքի միջազգային III ցուցահանդես-տոնավաճառին,
- ՀՀ մշակույթի նախարարության «Հայ գրականությունը թարգմանություններում» դրամաշնորհային ծրագրի ներկայացում:

Ս. թ. ապրիլի 24-29-ը մեկնել էինք Աստանա՝ մասնակցելու Եվրասիական գրքի միջազգային III ցուցահանդես-տոնավաճառին: Հայկական պատվիրակության կազմում Աստանա էր մեկնել նաև «Զանգակ» հրատարակչության թարգմանական ծրագրերի և միջազգային կապերի համակարգող Արթուր Մեսրոպյանը:

Ցուցահանդեսն անցկացվում էր Ղազախստանի Հանրապետության մշակույթի և սպորտի նախարարության և Աստանայի ակիմատի (քաղաքապետարանի) աջակցությամբ, կազմակերպիչն էր «Ֆոլիանտ» հրատարակչությունը:

Գրքի տոնավաճառին մասնակցում էին գրահրատարաչական ոլորտի ավելի քան 90 ներկայացուցիչներ մերձավոր և հեռավոր արտասահմանյան 25 երկրից, այդ թվում՝ Ղազախստան, Ռուսաստան, Բելառուս, Ղրղզստան, Տաջիկստան, Թուրքիա, Ալբանիա, Չինաստան, Հնդկաստան, Գերմանիա, Ուկրաինա, Լեհաստան, Հունաստան, Իրան և այլն: Տոնավաճառի Պատվավոր հյուրն էր Ուզբեկստանի Հանրապետությունը:

Ս. թ. ապրիլի 25-ին «Կորմե» ցուցահանդեսային կենտրոնի հիմնական նախասրահում տեղի ունեցավ ցուցահանդեսի պաշտոնական բացման արարողությունը: Բացմանը ներկա էին Ղազախստանի ազգային գրադարանի և Գրապալատի տնօրենները, գրողներ, ստեղծագործական և գիտական մտավորականության ներկայացուցիչներ: Ողջույնի խոսքով հանդես եկավ ցուցահանդեսի տնօրեն Նուրլան Իսաբեկովը, ով նաև ընթերցեց Ղազախստանի Հանրապետության պետքարտուղար Գ. Աբդիկալիմովայի, Ղազախստանի Հանրապետության մշակույթի և սպորտի նախարար Ա. Մուհամեդուլիի, Աստանայի ակիմի Ա. Իսեկեշևի ուղերձները:

Բացման պաշտոնական արարողությունից քիչ անց տոնավաճառի տնօրենը այցելեց հայկական տաղավար: Ծանոթացնելով տաղավարի հայեցակարգին՝ տեղեկացրինք, որ ներկայացված է պետական պատվերով ու աջակցությամբ և մասնավոր հրատարակչությունների նախաձեռնությամբ վերջին տարիներին Հայաստանում և արտերկրում հրատարակված Հայաստանի պատմությունը և մշակույթը ներկայացնող գեղարվեստական, ալբոմային, ինչպես նաև թեմատիկ այլ գրականություն հայերեն և օտար լեզուներով՝ մոտ 70 անուն գիրք, այդ թվում՝ Հայաստանի անկախության և Հայոց ցեղասպանության վերաբերյալ գիտահանրամատչելի գրականություն:

Հայկական տաղավարում առանձին հատվածով «Զանգակ» հրատարակչությունը ներկայացրել էր հայերեն, ռուսերեն և անգլերեն ռուսմենական և մանկապատանեկան գրականություն:

Ցուցադրվող գրքերի ցանկում էր նաև Սեն Հովհաննիսյանի «Հայաստան. Նախիջևան. Ցեղասպանություն» գիրք-ալբոմը, որը ադրբեջանական կողմի բարձրացրած աղմուկին պատճառ դարձավ: Նախքան տոնավաճառի բացման արարողությունը, ադրբեջանական կողմի պնդմամբ ցուցահանդեսի ղեկավարությունը պահանջեց

ցուցադրությունից հանել նշյալ ալբոմը, սակայն, Ղազախստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Արա Սահակյանի անմիջական միջամտությամբ գիրք-ալբոմը ցուցադրվեց մինչև ցուցահանդեսի ավարտը և մեծ հետաքրքրություն առաջացրեց տոնավաճառի այցելուների զգալի հատվածի շրջանում:

Հարկ ենք համարում նշել, որ ադրբեջանական տաղավարում ցուցադրված էին «Goris – 2010: Seasons of the theatre of the absurd: History of Occupied Nagorno-Karabakh and Battle for Justice» և «First Terrorist War: A Look from Russia. (Transnational Armenian Terrorism and Nagorno-Karabakh Conflict of 1988-1994)» վերնագրերով գրքերը, ինչի մասին մեր հերթին տեղեկացրինք ցուցահանդեսի տնօրինությանը և կազմակերպիչներին:

Նյուն օրը տեղի ունեցավ «Տարվա լավագույն գիրքը» մրցույթը՝ «կրթական գիրք», «ազգագրական հրատարակություն», «մանկապատանեկան գիրք», «մշակույթ և արվեստ», «գիտություն և նորարարություն», «Գրան պրի» անվանակարգերում: Մրցույթի ժյուրիի կազմում էին Ղազախստանի, Ուզբեկստանի, Տաջիկստանի, Բելառուսի, Ռուսաստանի և Հայաստանի ներկայացուցիչները: Հայկական կողմից ժյուրիի կազմում էի ես: Մրցույթին ներկայացված էին պետական պատվերով ու աջակցությամբ հրատարակված «Հմայակ Բդեյան» գիրք-ալբոմը (հայերեն-անգերեն), և Լիլիթ Ալթունյանի «Կուպույտ աղվեսը» հեքիաթի անգլերեն տարբերակը («Ձանգակ» հրատարակչություն):

Ցուցահանդեսի օրերին անցկացվեց մոտ 50 միջոցառում՝ շնորհանդեսներ, ընթերցումներ, ֆիլմերի դիտումներ, դպրոցականների համար տարբեր ինտելեկտուալ խաղեր, կլոր սեղաններ, հանդիպումներ:

Ապրիլի 26-ին հայկական կողմը մասնակցեց «Պետական աջակցություն. հրատարակչական գործունեության նախասիրությունները և արտոնությունները, ինչպես նաև գրականության և ընթերցանության խթանման ժամանակակից մեթոդները» խորագրով կլոր սեղանին, որի ընթացքում քննարկվեց արտասահմանյան խոշոր հարթակներում ԱՊՀ միասնական տաղավարով հանդես գալու նպատակահարմար

րությունը և հնարավորությունը: Հայկական տաղավարում կազմակերպվեցին հանդիպումներ Իրանի, Ալբանիայի, Թուրքիայի, Հնդկաստանի, Ղազախստանի, Բելառուսի, Ռուսաստանի և այլ երկրների հրատարակիչների հետ, ում ներկայացվեց «Հայ գրականությունը թարգմանություններում» դրամաշնորհային ծրագիրը և «Yerevan Book Fest» փառատոնը: Ալբանական «Ֆան նոլի» հրատարակչության հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց 2018-2019 թթ. ընթացքում «Հայ գրականությունը թարգմանություններում» դրամաշնորհային ծրագրի շրջանակում հրատարակել հայկական գրականություն: Առաջիկայում հրատարակելու նպատակով ալբանական հրատարակչության տնօրեն Ռեքսեփ Հիդան խնդրեց հնարավոր սեղմ ժամկետում ներկայացնել թարգմանության համար նախընտրելի գրքերի ցանկը: Փոխշահավետ համագործակցության առաջարկների դեպքում համագործակցելու պատրաստակամություն հայտնեցին Բելառուսի կրթության նախարարությանն առընթեր «Пачатковая школа» հանրապետական միացյալ հրատարակչության փոխտնօրեն Վիկտորյա Ֆիլիպովան և Ղազախստանում գործող ամերիկյան NIS (Rk project) կազմակերպության փորձագիտական վարչության պետի տեղակալ Դավիդ Մք Հաչոնը: Ղազախստանի, Բելառուսի և Տաջիկստանի ներկայացուցիչները ցանկություն հայտնեցին մասնակցելու «Yerevan Book Fest» փառատոնին:

Նույն օրը երեկոյան ցուցահանդեսի մասնակիցների համար կազմակերպվեց էքսկուրսիա Աստանայի տեսարժան վայրերով:

Արրիլի 27-ին ցուցահանդեսի աշխատանքը շարունակվեց: Օրվա երկրորդ կեսին հայտարարվեցին մրցույթի արդյունքները, և մրցանակները հանձնվեցին հաղթողներին: Հայկական կողմի մրցույթին ներկայացրած «Հմայակ Բդեյան» գիրք-ալբոմը «մշակույթ և արվեստ» անվանակարգում արժանացավ II մրցանակի, իսկ «Մանկապատանեկան գիրք» անվանակարգում «Կուպույտ աղվեսը» հեքիաթը՝ մասնակցի դիպլոմի:

Ապրիլի 28-ին կայացավ ցուցահանդես-տոնավաճառի պաշտոնական փակումը, որից հետո Ղազախստանում Հայաստանի Հանրապետության դեսպանությունը հյուրընկալեց հայկական պատվիրակության անդամներին:

Ցուցահանդեսին Հայաստանի ներկայացրած ողջ գրականությունը նվիրաբերվեց Ղազախստանում Հայաստանի դեսպանությանը

Ս. թ. ապրի 29-ին վերադարձանք Երևան:

• **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

- Հայաստանն առանձին տաղավարով մասնակցեց Եվրասիական գրքի միջազգային III ցուցահանդես-տոնավաճառին:
- Ներկայացվեց ՀՀ մշակույթի նախարարության «Հայ գրականությունը թարգմանություններում» դրամաշնորհային ծրագիրը:
- Պայմանավորվածություն ձեռք բերվեց ալբանական «Ֆան նոլի» հրատարակչության հետ՝ 2018-2019 թթ. ընթացքում «Հայ գրականությունը թարգմանություններում» դրամաշնորհային ծրագրի շրջանակում հրատարակելու հայկական գրականություն:
- «Տարվա լավագույն գիրքը» մրցույթի «մանկապատանեկան գիրք» և «մշակույթ և արվեստ» անվանակարգերում Հայաստանի ներկայացրած գրքերն արժանացան մասնակցի դիպլոմի և II մրցանակի:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում Ղազախստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությանը արտակարգ և լիազոր դեսպան Արա Սահակյանի գլխավորությամբ՝ Եվրասիական գրքի միջազգային III ցուցահանդես-տոնավաճառին մասնակցության և հայական պատվիրակությանն Աստանա այցի ընթացքում աջակցելու համար:

ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի
արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ



Ա. Մնացականյան